

ԲԱՐԴ ԱԾԱԿԱՆՆԵՐԸ Հ. ՀԱՅՆԵՒ «ԵՐԳԵՐԻ ԳԻՐՔ»
ԺՈՂՈՎԱԾՈՒՌԻՄ ՈՐՊԵՍ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑ

Հանրահայտ է, որ գերմաներենի բառապաշարի համալրման և հարստացման հիմնական ուղին եղել և մնում է բառաբարդումը և հատկապես՝ որոշիչ տիպի բարդությունները: Գերմաներենում անսահմանափակ հնարավորություններ կան միմյանց հետ համադրելու երկու գոյական անուն, որոնցից առաջինը երկրորդի նկատմամբ կատարում է որոշիչ պաշտոն: Եթե գերմաներենում հնարավոր չէ շարահյուսորեն արտահայտել «դաշտային աշխատանքներ», "полевые работы" կամ «լեռնային օդ», "горный воздух" հասկացությունները, ինչպես հայերենում և ռուսերենում, գերմաներենը դիմում է բառաբարդման. Feldarbeit, Bergluft: Այս տիպի բարդությունների առատությունը հիմնականում բացատրվում է գերմաներենի հարաբերական ածականներ կազմող վերջածանցների նվազ քանակությամբ: Բառակազմական այս ձևն այնքան տիպական է գերմաներենի համար, որ անգամ այն դեպքերում, երբ որևէ հասկացություն հնարավոր է շարահյուսորեն արտահայտել, օրինակ՝ mütterliche Liebe, väterliches Haus, գերմաներենն այնուամենայնիվ գերադասում է ստեղծել բարդ բառեր՝ Mutterliebe, Vaterhaus և այլն:

Գերմաներենում տարածված են նաև գոյական+ածական կամ ածական+ածական կառուցվածքով որոշիչ տիպի բարդությունները, որոնց միջոցով ստեղծվում են բազմաթիվ բարդ ածականներ: Այդ բարդությունները կարելի է օգտագործել հատուկ ոճաբանական նպատակներով, որոնք ժողովրդի կողմից մեծ մասամբ օգտագործվում են որպես ածականի արտահայտած հատկություններն ավելի ուժեղ շեշտելու միջոց. օրինակ՝ himmelblau, meerblau, veilchenblau, կամ milchweiß, kreidenweiß, schneeweiß և այլն: Բարդության այս տիպն ընդունված է զնահատել որպես ածականի գերադրական աստիճանի արտահայտման, նրան «փոխարինող» ժողովրդական գերադրական աստիճան,

որը գերմանական լեզվաբանների մոտ ընդունված է անվանել ֆոլկսսուպեր-լատիվ (Volkssuperlative):*

Որոշ գրողներ, նրանց թվում նաև և հատկապես Չայնեն, բարդ բառեր կազմելու այս անսահմանափակ հնարավորությունն օգտագործում են որոշակի ոճական նպատակներով՝ միմյանց հետ համադրելով իմաստով անհամատեղելի հասկացություններ, և դրանով շեշտում են իրենց դրական կամ բացասական վերաբերմունքը դեպի նկարագրվող իրականությունը կամ երևույթները: Այն նաև հնարավորություն է տալիս բոլորովին անսպասելի համեմատություններ կատարել: Այսպես՝ համեմատենք Չայնեի կողմից օգտագործված մի քանի բարդ ածականներ. *neugierkluge Augen*, *wehmutweiche Abendstunde*, *transzendentalgrauer Leibrock* և այլն, որոնց առաջին անդամներն այս կամ այն չափով կորցնելով իրենց ինքնուրույն բառային իմաստը, նպաստում են երկրորդ անդամի բառիմաստի սաստկացմանը: Այս ածականներն առաջին հայացքից անհամատեղելի բաղադրիչների համադրման արդյունք են: *Neugierklug* բարդ ածականի առաջին անդամը լրացնում է *klug* ածականի իմաստը և շեշտում հատկապես այն, որ այդ աչքերը «հետաքրքրասիրությամբ լեցուն» խելացի աչքեր են: Կամ *wehmutweiche Abendstunde* ասելով՝ հասկանում ենք ոչ թե պարզապես հանդարտ, - հանգիստ մի իրիկնաժամ, այլ *Wehmut* գոյականի համադրումից մեզ պարզ է դառնում, որ այդ հանդարտությունը լեցուն է թախիծով ու հուսալքությամբ:

Սույն հոդվածի նպատակն է հանգամանորեն վերլուծել Չ. Չայնեի «Երգերի գիրք» ժողովածուում օգտագործվող մի շարք նմանօրինակ բարդու-թյուններ, կանգ առնել նրանց բառակազմական առանձնահատկությունների, հատկապես ածականների բառաբարդման վրա: Հոդվածում փորձ է արվել նաև մեկնաբանել, թե հեղինակն իր զգացմունքներն արտահայտելու համար ինչ արտասովոր բառակազմական համադրություններ է կատարել և դրանով գերմաներեն լեզուն յուրովի հարստացրել նմանօրինակ ածականներով:

Վերը նշված ժողովածուի «Երազների» բաժնում բանաստեղծը, տառա-պելով սիրած էակի անտարբերությունից, ընկնում է տեսիլքների և պատրանք-ների գիրկը: Հեղինակի այդ զգացմունքները կարծես անմիջականորեն արտացոլված են նրա բանաստեղծական լեզվի և հատկապես իր սիրած էակին

նկարագրող բազմաթիվ որոշիչի դեր կատարող բարդ ածականներում. *wundersüßes Mägdlein, O Mädchen engelgleich, die allerschönste Maid, die marmorblasse Maid* և այլն: Այս ածականների առաջին բաղադրիչներն ինչպես տեսնում ենք ծառայում են հիմնականում որպես սաստկացուցիչ տարրեր և դրանց օգնությամբ հեղինակին հաջողվում է մերթ արտահայտել իր հիացմունքն իր սիրելիի համդեպ, ինչպես *wundersüß* և *engelgleich* ածականներում *wunder-* և *engel-* բաղադրիչների օգնությամբ, մերթ նկարագրել նրան որպես մարմարի պես զունատ և սառը մի աղջիկ (*marmorblasse Maid*), որն անտարբեր է բանաստեղծի տառապանքների և հուսալքության հանդեպ:

Հայնեն իր բանաստեղծություններում օգտագործել է հատկապես *wunder-* կիսածանցով բազմաթիվ ածականներ: Այս կիսածանցի օգնությամբ արտահայտում են սովորաբար առարկաների կամ երևույթների դրական հատկանիշներ:^{**} Սակայն մի բանաստեղծության մեջ, երբ թռչունները պատմում են նրան իր սիրելիի մասին, նա համադրում է այդ կիսածանցը բացասական իմաստ ունեցող *schlau* ածականի հետ՝ դրանով իսկ օժտելով այդ բառը յուրօրինակ արտահայտչականությամբ.

Das sollt ihr mir nicht erzählen,

Ihr Vöglein *wunderschlau*...

“Nun hast du Kaufgeld...” երգիծական բանաստեղծության մեջ Հայնեն նկարագրում է իր «երևակայական» հարսանյաց տոնախմբությանը նվագող երաժիշտներին.

Zwölf *winddürre* Musiker schlendern herein,

Blind Fiedelweib holpert wohl hintendrein-

Da schleppt der Hanswurst, in *buntscheckiger* Jack,

Den Totengräber huckepack.

Winddürre ածականը նա օգտագործել է՝ ավելի ընդգծելու այդ երաժիշտների վտիտությունը. այստեղ համադրվել են առաջին հայացքից կարծես անհամատեղելի «քամի» գոյականը և «բարակ, նիհար» ածականը, որոնց մեջ գրեթե որևէ իմաստային կապ չի կարող լինել, սակայն միայն Հայնեի գրչին է հատուկ ստեղծել այդպիսի ածական, որն ավելի դիպուկ է նկարագրում այդ երաժիշտների վտիտությունը:

իր սոնետներից մեկում (Fresko-Sonette an Christian S.) մենք հանդիպում ենք հետևյալ տողերը.

In stiller *wehmütweicher* Abendstunde

Umklungen mich die längst verschollnen Lieder

Und Tränen fließen von der Wange nieder,

Und Blut entquillt der alten Herzenswunde...

Wehmütweich ածականը միանգամից մեզ պարզ է դարձնում հեղինակի քախտալի հոգեվիճակը, երբ նա կրկին հիշում է իր սիրելի կնոջ պատճառած տառապանքները:

Այդ նույն սոնետում Հայնեն իր ծաղրական վերաբերմունքն է արտահայտում իրենց բարձրակիրք ձևացնող «հոգևոր դատավորների» հանդեպ՝ անվանելով նրանց «բարձրակիրք կապիկներ». hochgelahrte Affen: Հեղինակն այստեղ միտումնավոր է օգտագործել նաև hochgelehrt ածականի արխաիկ ձևը՝ ավելի ընդգծելու իր բացասական և ծաղրական վերաբերմունքն այդ մարդկանց հանդեպ.

Ich lache ob den *hochgelahrten* Affen.

Die sich aufblähen zu stolzen Geistesrichtern,

Ich lache ob den feigen Bösewichtern

Die mich bedrohn mit *giftgetränkten* Waffen.

"Abenddämmerung" բանաստեղծության մեջ Հայնեն գրել է.

...Ein Lachen und Murmeln,

Seufzen und Sausen.

Dazwischen ein *wiegendliedheimliches* Singen...

Wiegendlied ~ *heimlich* բառերը համադրելով, նա շեշտում է *heimlich* ածականի իմաստը և համեմատում այն օրորոցային երգի հետ: Այդ ածականի օգնությամբ նրան հաջողվում է ավելի ցայտուն կերպով պատկերել աղմուկի մեջ լսվող օրորոցային երգի առեղծվածային մեղմությունը: Այդ երգը լսելով՝ նա հիշում է իր մանկությունը, երբ երեխաներով գաղտագողի ականջ էին դնում մեծ աղջիկների զրույցին.

... Wenn wir am Sommerabend,

Auf den Treppensteinen der Haustür.

Zum stillen Erzählen niederkauerten.

Mit kleinen neugierklugen Augen...

Neugierklug ածականի միջոցով մենք պատկերացնում ենք նրանց հետաքրքրասիրության ու ուշադրության աստիճանը: Այս բարդության բաղադրիչների իմաստային հարաբերությունն ընթերցողին պարզ է դարձնում երեխաների աչքերի միաժամանակ խելացի և հետաքրքրասեր հայացքը: Այստեղ դժվար է ասել, թե այս ածականի հատկապես որ բաղադրիչի իմաստն է շեշտվում, սակայն այս երկու բաղադրիչների իմաստների միասնության հետևանքով ստեղծվում է բարձր հուզաարտահայտչականություն ունեցող ածական:

“Don Ramiro” բանաստեղծության մեջ մա Partizip 2-ով ստեղծված բարդ ածականների օգնությամբ նկարագրում է Կլարայի հոգեվիճակը.

Clara starret , Tod im Antlitz

Kaltumflirret, nachtunwoben.

Հայնեն մեծ թվով բարդ ածականներ է օգտագործել մահ «Հյուսիսային ծով» բանաստեղծությունների շարքում՝ բնության գեղեցկությունը նկարագրելիս: Այստեղ սերն այլևս տիրապետող չէ, այլ հիմնականը բնության նկարագրությունն է և փիլիսոփայական խորհրդածությունները: Հայնեն իր Sonnentergang բանաստեղծության մեջ խորհրդածում է հավերժ ապրող ու տանջվող աստվածների մասին, և իր տանջանքներից ազատվելու ելքը մա գտնում է միայն մահվան մեջ: Ահա այդ բանաստեղծության վերջին տողերը.

...Ich aber der Mensch.

Der niedriggepflanzte, der todbeglückte.

Ich klage nicht länger.

Niedriggepflanzte ասելով, մա ի նկատի ունի այն, որ ինքն ապրել է երկրում, հողի վրա և որ ոչ թե աստվածների պես անմահ է, այլ՝ մահկանացու: Հեղինակն այստեղ ընտրել է *niedrig* ածականը, որն իր իմաստի մեջ պարունակում է արհամարհական և թերագնահատողական երանգ: Իսկ օգտագործելով *gepflanzte*, այլ ոչ թե *aufgewachsen* Partizip 2-ը՝ մա իրեն նմանեցնում է կարծես երկրի վրա աճող և մեծացող բոլոր այլ բույսերին, կենդանիներին, որոնք, ինչպես աշխարհում ամեն ինչ, ենթակա են ոչնչացման ու անհետացման: Todbeglückt ածականը մա օգտագործել է իր տառապանքներից ազատվող

և միայն մահվան մեջ իր ուրախությունը գտնող մարդու կերպարը ստեղծելու համար՝ հակադրելով միմյանց իմաստով միանգամայն անհամատեղելի հասկացություններ:

Մեկ այլ բանաստեղծության մեջ, որը կոչվում է “Reinigung”, հեղինակը ներկայացնում է իր տանջված հոգին.

...Und die kalte, gleißende Schlangenhaut

Der Heuchelei

Die mir so lang die Seele umwunden.

Die kalte Seele,

Die gottverleugnende. engelverleugnende.

Unselige Seele...

Բարձր հուզաարտահայտչական իմաստ են արտահայտում *gottverleugnend* և *engelverleugnend* բարդությունները: Այդ անսովոր համադրությունների օգնությամբ նա ավելի դիպուկ է պատկերում երեսպաշտությունից ու կեղծավորությունից հոգնած նրա «աստվածամերժ» հոգին, որն արդեն պատրաստ է մաքրման ու ազատագրման:

Այս շարքում հեղինակը նկարագրել է աստվածների գերբնական ուժը, ծովի գեղեցկությունն ու հզորությունը, արևի վառվռուն փայլը, և այդ ամենը նա հմտորեն արտահայտել է բարդ ածականների օգնությամբ:

Գեղեցիկ է նրա արևի նկարագիրը “Untergang der Sonne” բանաստեղծության մեջ.

Des Tages über wandle sie freudig

Am hohen Himmel, purpuregeputzt

Und diamantenblitzend-

Und allgeliebt und allbewundert

Von allen Weltkreaturen...

Կամ մեկ այլ բանաստեղծության մեջ.

Die Sonne neigte sich tiefer, und warf

Glührote Streifen auf das Wasser...

Սիւս թե ինչպես է նա նկարագրում ծովը.

...Die glühend rote Sonne steigt

Hinab ins weitaufschauende,

Silbergraue Weltenmeer...

Բարդ ածականների միջոցով Հայնեն այստեղ ստեղծում է առեղծվածային ու առասպելական պատկերներ: Այսպես՝ “Die Nacht am Strande” բանաստեղծության մեջ *totschlaglaunig*, *dunkeltrotzig*, *zaubergewaltig*, *übermutberauscht*, *ahnungssüß*, *zauberlieblich* ածականների օգնությամբ ստեղծվում է հեքիաթային մի անիրական պատկեր: Հատկապես անսովոր մի բարդություն է *totschlaglaunig* ածականը: Թեև գերմաներենում գոյություն ունեն «տխուր» իմաստով բազմաթիվ ածականներ (*traurig*, *wehmütig*, *wehmutsvoll*, *elegisch*, *trübe*, *trübsehlig* և այլն)***, Հայնեն այնուամենայնիվ չի բավարարվել գերմաներենի հարուստ բառապաշարով և ստեղծել է «մահացու հարվածի չափ տխուր» իմաստ արտահայտող *totschlaglaunig* ածականը:

«Erklärung» բանաստեղծության մեջ չափազանց հուզաարտահայտչական է *feuergetränkte Riesenfeder* բառակապակցությունը.

Und mit starker Hand . aus Norwegs Wäldern

Reiß ich die höchste Tanne,

Und tauche sie ein

In des Ätnas glühenden Schlund, und mit solcher

Feuergetränkten Riesenfeder

Schreib ich an die dunkle Himmelsdecke-

«Agnes, ich liebe dich.»

Հեղինակն այս շարքում հեքիաթային է պատկերացնում իր սերն ու զգացմունքները: Նա իր սիրած էակին համեմատում է աստղերի, երկնքի, ծովի և այլնի հետ.

...Jene Sterne sind die Augen

Meiner Liebsten, tausendfältig

Schimmern sie und grüßen freundlich

Aus der blauen Himmelsdecke...

Այստեղ *tausendfältig* ածականի միջոցով նա համեմատություն է դնում իր սիրելիի աչքերի ու կայծկլտացող, հազարափայլ աստղերի միջև: Նա նկարագրում է իր սիրած կնոջ շուրթերը *die blumenkeuschen*, *hochgeschürzten Lippen* ածականներով:

Գեղեցիկ և յուրօրինակ ձևով է նա դիմում սև արևի նման աչքեր ունեցող փերիին.

O. du schwarze Sonne, wie oft.

Entzückend oft, trank ich aus dir

Die wilden Begeisterungsflammen.

Und stand und taumelte. feuerberauscht-

Dann schwebte ein taubenmildes I. ächeln

Um die hochgeschürzten, stolzen Lippen

Und die hochgeschürzten, stolzen Lippen

Hauchten Worte, süß wie Mondlicht...

Հայնեն գործածել է *feuer* արմատը ստեղծելով բարդ ածականներ, որոնք արտահայտում են իր սիրելիի հանդեպ տածած կոքոտ ու անմար սերը . feuergetränkt, feuerberauscht, feuerblühend:

Հետաքրքիր են «Sturm» բանաստեղծության մեջ նրա կողմից գործածված ածականները.

Es wütet der Sturm

Und er peitscht die Wellen,

Und die Wellen. wutschäumend und bäumend

Türmen sich auf ...

... Und plötzlich stürzt es hinab

In schwarze, weitgährende Flutabgründe...

... Schon flattert, leichenwitternd

Die weiße, gespenstische Möwe...

... Und zwischendurch hör ich vernehmbar

Lockende Harfenlaute

Sehnsuchtwilden Gesang.

Seelenschmelzend und seelenzerreißend...

Wutschäumend, *weitgährend*, *leichenwitternd* ածականների օգնությամբ հեղինակը պատկերել է փոթորկի սարսափելի տեսարանը, և դրա հետ միասին *sehnsuchtwild*, *seelenschmelzend*, *seelenzerreißend* ածականների օգնությամբ նկարագրվում է փերիի սրտավեր ու սրտատանջ երգը:

Բնության երևույթները նա արտահայտում է *weißgekräuselte Wellen*, *feuerblühende Sonne*, *vollblühender Mond*, *hochaufrauschendes Meer*, *sonnengeweckter Frühling* ածականներով, նաև զոյականացված բարդ ածականի միջոցով *die Strahlenbuhlande*: Հայնեն հաճախ գերադասել է ստեղծել բարդ

ածականներ իր ասելիքը մեկ բառով արտահայտելու համար, մինչդեռ այդ մեկ բառը կարող է մի ամբողջ նախադասության իմաստ պարունակել:

"Der Gesang der Okeaniden" բանաստեղծության մեջ, օրինակ, օգտագործելով Partizip 1,2-ով բարդ ածականներ, նա գրել է.

koste den süßen duft der Rose.

D...Schwar-beinigte Vögel.

Mit weißen Flügeln meerüberflatternde.

Mit krummen Schnäbeln seewassersaufende...

...Eur Leben ist bitter wie eure Nahrung.

Ich aber, der Glückliche, koste nur Süßes,

Ich er mondscheingefüllerten Nachtigallbraut...

Mondschein գոյականի և *gefüllert* Partizip2-ի միջև իմաստային գրեթե ոչ մի կապ չի կարող լինել, սակայն Հայնեն, օգտագործելով այդ բառը փոխաբերական իմաստով, հիմնալի ածական է ստեղծել՝ լուսնի շողով սնվող «հարսնացու-դեղձանիկին» նկարագրելու համար:

Այսպիսով վերլուծեցին Հայնեի կողմից ստեղծված բազմաթիվ բարդ ածականներ, որոնց միջոցով հեղինակային խոսքը համեմվում է բարձր հուզաարտահայտչականությամբ: Դրանք արտահայտում են հեղինակի մտորումները, նրա զգացմունքներն ու հույզերը: Հայնեի գործածած բարդ ածականների մեծամասնությունն անհատական կամ հեղինակային նորաբանություններ են, ինչպես օրինակ՝ taubenmild, winddörr, wiegenliedheimlich, neugierklug, totschiaglaunig, feuerberauscht, liebeweit, seidenrauschend, diamantenblitzend, blumenkeusch, geiergequält, և այլն:

* Գրականություն

* М. Д. Степанова, Словообразование современного немецкого языка, Москва, 1953 г.

A. Iskos, A. Lenkova, Deutsche Lexikologie, Leningrad 1960.

W. Fleischer, Wortbildung der deutschen Gegenwartssprache, Leipzig 1969

** Словарь словообразовательных элементов немецкого языка, изд. Русский язык, 1979 г.

*** Synonymwörterbuch, Veb Bibliographisches Institut, Leipzig, 1980.